

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2019

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԵՎ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Միրելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՝ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադիր եղիր պատասխանների ձևաբուղը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ք X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 45-50-րդ և 66-68-րդ առաջադրանքներում յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ դի՛ք X նշանը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1

Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում միևնույն տառը կամ տառակապակցությունը:

- 1) նա-կին, տա-տակ, տա-տուկ, ապու-տ
- 2) համա-րոպական, արժ-որել, զին-աճառ, ալ-արս
- 3) խարխսա-ել, հղ-անալ, թրմ-ոց, հա-շտապ
- 4) սաղավար-, խր-վիլակ, գաղ-նի, խայ-աբղետ

2

Ո՞ր շարքի բոլոր բառերում կրկնակ բաղաձայն կա:

- 1) օ-ան, տա-երք, ըն-իմադիր, տա-ալուծել
- 2) ու-ափառ, տանջա-ուկ, հո-ուիհի, ա-ահայր
- 3) մ-կահողմ, անդո-ազիր, չո-որդ, խորազ-ին
- 4) գործու-ում, այ-ենական, ա-կուն, հե-են

3

Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:

- 1) ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ, ՍՈՎՈՄՈՆ ԻՍԱՍԱՏՈՒՆ, ՆՈՐ ԶՈՒՂԱ, ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈ
- 2) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ, ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏ, ՄԱՐԻԱՆՅԱՆ ԻԶՎԱՅՐ
- 3) ՄԵԾ ՀԱՅՔ, ԼՅՈՒԴՈՎԻԿՈՆ ՍԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ, ԼՅՈՒԴՎԻԳ ՎԱՆ ԲԵԹՀՈՎԵՆ, ԹԱԻԼԱՆԴԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
- 4) ԿԻԼԻԿԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾ, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ, ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

4

Ո՞ր շարքի բոլոր բառերում ճայնավորի հնչյունակոխություն կա:

- 1) սրախողխող, լուսարձակ, ընչազուրկ, երկնապաց
- 2) պատրանք, գնացուցակ, վիրակապ, վերստին
- 3) ուղեկալ, ակնդետ, խնկաբույր, մանկամարդ
- 4) հրանոք, հոգաբարձու, աղավնյակ, գիշանգղ

5

Ո՞ր շարքի բոլոր բառերի (բառաձների) վերջին վանկն է շեշտվում:

- 1) վեցական, իհարկե, բարձրահոն
- 2) քույրդ, քաղաքներից, դրամարկղեր
- 3) թրիսկոց, կարծես թե, դուստրեր
- 4) մեծ-մեծ, ի դեպ, չեխովյան

6

Ո՞ր շարքի բոլոր բառերում է ընդգծված **n**-ն արտասանվում լո:

- 1) բարեռողոյն, անողոք, ենթառովայնային
- 2) ամենաորակյալ, երկարատ, կողուկը
- 3) բազմառատ, բարձրորակ, ցածրատրն
- 4) հոգեռդի, հնառն, արջառս

7

Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:

- 1) պչրել, ծերծեքել, սեթենթել, նազել
- 2) ճախրել, բռչել, ճողովրել, սավառնել
- 3) ակնապիշ, սևոռուն, ակնբախ, անքրիթ
- 4) արդար, աչառու, իրավացի, անմեղ

8

Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Ակուբներում հանգան վերջին կրակները, և վրանախումբը ընկղմվեց խավարի մեջ:
- 2) Դատավճռով նախատեսված էր ամբողջ գույքի բռնագրավում:
- 3) Ակնոցի տակից աչքերը հառնեց դեմ դիմաց նստածին:
- 4) Ուսուցուիին դրվատեց հայոց լեզվի օլիմպիադայում հաղթած աշակերտներին:

9

Ո՞ր տարրերակում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:

- 1) **մի բելով կարած լինել** - նույն բացասական հատկություններն ունենալ, **քամուն տալ** - վատնել
- 2) **շատ զոր վերցնել** - վեճերի առիթ տալ, **մատի փաքարան անել** - խրատները մտապահել
- 3) **Ռորիկոնն անցնել** - վճռական քայլ կատարել, **ծեռքերը լվանալ** - հրաժարվել մի բանի մասնակցելուց
- 4) **զոր ծեծել** - ավելորդ, ամօգուտ խոսել, **կրակի հետ խաղալ** - վտանգավոր քայլ կատարել

10

Ո՞ր շարքի բոլոր բառագույզերն են կազմված հականիշներից:

- 1) մեծատուն-ընչազուրկ, մեղանչել-ապաշխարել
- 2) հանդուգն-վեհերոտ, տարակարծիք-համատեղ
- 3) բերդի-անպտուղ, ներիակ-իրարամերժ
- 4) երևակայական-պատմական, իմաստակ-քերուս

11

Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ ածանցավոր:

- 1) թերահավատ, խելագար, վայելուչ, հրապարակ
- 2) բափուտ, ծիրանազույն, տհաճ, ամենալավ
- 3) պարագիծ, քսոր, անդրավարտիք, փափուկ
- 4) ազդու, փառք, հատուկ, արժանի

12

Ո՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:

- 1) ալեծուփ, նախնադար, դափնեպսակ
- 2) բարետես, դավադիր, փայտածուխ
- 3) կաշեգործ, տնետուն, լուսահորդ
- 4) կորամեջք, դյուցազուն, այգաբաց

13

Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում -եղ վերջավորությամբ:

- 1) թոշնաբույն, զորացույց, հոդամաս, ամսագիր
- 2) վազր, դիտակետ, միջնապատ, հերթապահ
- 3) ստուգայց, սարալանջ, ձիաբեռ, խաղաթուղթ
- 4) գիտափորձ, մեծատառ, շտար, ճամփեզր

14

Տրված հատվածներում հոդի ո՞ր տեսակը գործածված չէ:

- Երգերդ աղբյուր են զուլալ՝ Մեր երկրի արևից բխած:
- Կարծես շատ քիչ է աշխարհիս հոդը, Որ մարդիկ մեռնում ու հոդ են դառնում:
- Տիսուր երեկոն զարկել է վրան. Սիրտս կարոտով կանչում է քեզ, ե՞կ:

- 1) ցուցական
- 2) ստացական
- 3) դիմորոշ
- 4) որոշիչ

15

Ո՞ր նախադասության մեջ կապ չկա:

- 1) Բախտը ինձնից թուավ, զնաց Վերջալույսի շողերի մեջ:
- 2) Նա ինձ մոտ է գիշերում. երեկոյան եթե վաղ գա, հենց այս գիշերվա զնացքով կճանապարհեն:
- 3) Ես գիտեմ՝ մի օր պիտի չքանաս Որպես մի երազ՝ չծնված բնավ:
- 4) Մայրը ուշադիր հետևում էր, մինչև որդին անցավ սառցակալած ճանապարհը:

16

Ո՞ր շարքի բոլոր բառերն են անկախ դերքայներ:

- 1) ամպած, դառնալով, բարձրացող
- 2) գտած, լրագրող, ցանկանալ
- 3) արտասանի, թովոացող, քնեցնելիս
- 4) կարկամած, փախել, գրելուց

17

Ո՞ր շարքի բոլոր բայերն են կազմությամբ պարզ (առանց բայական ածանցի):

- 1) կարդալ, կառչել, դիպչել, տնկել
- 2) գաղթել, բռնել, կտրտել, խաղալ
- 3) դողանջել, գրուցել, թույլատրել, տեսնել
- 4) հոգնել, վազվել, մարտնչել, հարցնել

18

Ո՞ր նախադասության մեջ չեղոք սեռի բայ չկա:

- 1) Ես, որ երբեք զգացմունքային չեմ եղել, ուզեցի հրացանս առնել և հենց նրա աչքի առջև փշրել այն:
- 2) Նայեցի նրա դեմքին. այդ դեմքը միաժամանակ արտահայտում էր և զայրույթ, և պաղատանք:
- 3) Բայց հոգիս չունի ոչ մի հանգրվան, Նորից թովում է ինձ ոսկե հեռուն:
- 4) Եվ տեսնում էի՝ զմրուխտ շորերով Սի նավ էր սահում օրոր ու շորոր:

19

Ո՞ր նախադասության մեջ ու հոլովման ենթարկվող գոյական չկա:

- 1) Ծնողը պարտավոր է երեխայի մեջ դեռ մանկուց սեր սերմանել դեպի հայրենիքը:
- 2) Կլինես քննուշ, մոտիկ, հարազատ, Անուշ խոսքերով կդյութես հոգիս:
- 3) Զին ճանաչում էր այդ հոգտի բոլոր բույրերն ու հոտերը:
- 4) Զորակներում հիմա էլ կա Մանասի տնկած այգին՝ սպիտակ ու կարմիր վարդերի թփերով:

20

Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածականներ:

- 1) մարդախույս, մշտապես, միակ, պարզունակ
- 2) բաղձակի, ամենակին, վայելուշ, մկանուտ
- 3) առաջնային, այսպիսի, աշխույժ, արթուն
- 4) արագահոս, վճռորոշ, խավարամած, հմայիչ

21

Ո՞րն է պարզ համառոտ նախադասություն:

- 1) Ինձ չեն հասկանում:
- 2) Ուշ գիշեր է:
- 3) Լույսը շուտով կբացվի:
- 4) Երեխանե՞ր, մի՛ վազեք:

22

Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:


Զայնը ալիքվելով հասավ անձավին, , և նորից տիրեց լարված լոռություն:

- 1) որ զրնօրուն երգի պես տարածվում էր շրջակայքում
- 2) ինչքան էլ լեռնալանջը բուսականությունից զուրկ էր
- 3) իսկ վերին այրերի մոտ, ցից-ցից քարերին թառած, հեռուներին են նայում հպարտ արծիվները
- 4) որ ահարկու երախի պես կլանեց նրան

23

Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Օրերի մշուշից մոտենում է ինձ չողախ Եզորը, ելնում է, ինչպես մեր ժայռերը՝ սպիտակ մասախուղի միջից, և ես տեսնում եմ նրա ցեխոտ մեջքը և կավի նման մաշկը, որ դեղնել էր քարանձավի խոնավությունից:



24

Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:

- 1) Նա եղավ շատ երկրներում, բայց ի վերջո վերադարձավ և մեզ համար հյուսեց իր հոգեզմայլ երգը:
- 2) Բրուտանոցից ութսուն-իննոսուն մետք հեռավորության վրա արևի ցոլքերով ուկերպած ձորն էր:
- 3) Խթանելով տնտեսության զարգացումը՝ պետությունը փորձում է լուծել սոցիալական խնդիրներ:
- 4) Ծեր արծիվի պես բաց արեց աչքերն ու իրեն դիմաց տեսավ դաժան մահը:

25

Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:

- 1) *Ուսուցիչը կարդաց պարզեց արժանացածների ամունները:*
Ուսուցիչը կարդաց նրանց անունները, ովքեր պարզեցի են արժանացել:
- 2) *Որքա՞ն լավ է մարդկանց՝քեզ լիովին վստահելը:*
Որքա՞ն լավ է, եթե մարդիկ քեզ լիովին վստահում են:
- 3) *Թատրոնը չափից ավելի շատ սիրողը ի վերջո խեղդում է իր սիրելիին:*
Նա, ով չափից ավելի շատ է սիրում թատրոնը, ի վերջո խեղդում է իր սիրելիին:
- 4) *Հրատապ խնդիր է երկու բունելախորշերի միանալը ճիշտ ժամկետում:*
Հրատապ խնդիրն այն է, որ երկու բունելախորշերը միանան ճիշտ ժամկետում:

26

Ո՞ր տարրերակում է ենթակայի արտահայտությունը սխալ նշված:

- 1) Այդ ընդարձակ սենյակում խոնավության պատճառով ոչ մեկը չէր ապրում:
(դերանուն)
- 2) Ու եկողներն ել խորհուրդ չեն տալու Փատրել անհնարն ու անկարելին:
(գոյական)
- 3) Ի՞նչ է մնում զնացողին, ի՞նչ է մնում ինձ անելու: *(դերանուն)*
- 4) Սեղքին է ընկել թաց գետնի վրա. խեղճը կմրսի: *(ածական)*

27

Ո՞ր տարրերակում ընդգծվածներից ոչ մեկը որոշիչ չէ:

- 1) Եվ իյուսիսային հեռուներում ու ցրտում Կարծես ցոլաց իմ նախրյան արևն ալ:
- 2) Ո՞վ է կանգնել պաշտպան երկրին մեր ավեր, Ո՞վ է թարգման մեր դարավոր տան-ջանքին:
- 3) Ու զանգերն այն լալազին Սեռնող իմ երկրում Չեն հուզելու քո հոգին Տիրությամբ անհուն:
- 4) Թշնամին եկավ մութի պես կամաց, Ամենքն ահարեկ փախան դեպի սար:

28

Ո՞ր նախադասության մեջ բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Բարը զայրույթից կորցրել էր իրեն և նրա բիբերը թվում էր ուզում էին դուրս պոռք-կալ ակնակապիճներից:
- 2) Այլայլված ու գրգռված տեղ հասավ Վահանը որ նկատելով եղբոր դիակը ուշա-կորույս ընկավ գետնին:
- 3) Նրա առաջ ծառացել էին լուրջ խնդիրներ պետք է բնակարան գտներ նաև աշխա-տանքի մասին պիտի հոգար:
- 4) Որքան հեռանում էր այնքան ավելի էր զգում ինչ-որ մեկի անհանգատություն պատճառող ներկայությունը:

29

Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:

1. Տուն գնալիս բրուտ Ավագը մի քանի քար է դարսում իրար վիա, վերևում էլ դնում ցաքի փուշ, որպեսզի, ինչպես ինքն է ասում, «քամին խաղա» և չորացնի ամանները:
 2. Առաջին մասում դրված են «չարխսը», ջրի կուժը և կավե ցեխը, երկրորդ մասում բերանի վրա շարված են դեռ չքրծած կմեր, կուլաներ, գավաթներ և դարակներ:
 3. Բրուտի քարանձավը երկու մասից է. առաջինն ավելի ցածր է, երկրորդը՝ բեմի չափ բարձր:
 4. Քարանձավը դուռ չունի, այդ պատճառով էլ բրուտները ուրիշ կերպ են մուտքը փակում:
- 1) 3, 4, 2, 1
 - 2) 4, 3, 1, 2
 - 3) 4, 1, 3, 2
 - 4) 3, 2, 4, 1

30

Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:

Առաջին անգամը չէ, որ ինձ վիճակվում է հայտնվել այն աննախանձելի ու անձեռնոտու վիճակում, երբ ուրիշները գովարանելով գովարանում են մեր մշակույթի այս կամ այն երևույթը, իսկ ես հանձն եմ առնում առարկողի դերը: Ինչո՞ւ, եթե իրոք, դերն աննախանձելի է և, մանավանդ, անձեռնոտու: Այն պատճառով, որ գովարանությունը թվում է անհիմն, անձշմարիտ, իսկ ո՞ւմ հայտնի չէ հինավորց ասացվածքը՝ «Ես Պլատոնին սիրում եմ, բայց ճշմարտությունն ավելի եմ սիրում»: Ավելի էական պատճառ էլ կա. այն, որ անձշմարիտ գովարանությունը սխալ ճանապարհի է մղում արվեստը, և դրա հանդեպ չի կարելի անտարբեր լինել:

- 1) գիտական
- 2) հրապարակախոսական
- 3) վարչական
- 4) գեղարվեստական

31

Ո՞ր միտքն է սխալ Ա. Խսահակյանի «Սաադիի վերջին գարունը» ստեղծագործության վերաբերյալ:

- 1) Սաադին մահանում է՝ խորապես հիասքափված կանանցից:
- 2) Սաադին կյանքի վերջնազգծին խորիում է աշխարհի ու կյանքի մասին:
- 3) Սաադին մտորում է, որ հարյուր տարվա կյանքն անցել է մի գիշերվա երազի պես:
- 4) Խոր ծերության հասած բանաստեղծը շարունակում է հիանալ աշխարհի գեղեցկությամբ:

32

Ա. Բակունցի ո՞ր պատմվածքից բերված հատված չկա:

- «Այդ կիճը երբեք բորիկ ոտքերով չի քայլել, չի նստել մխացող արարի առաջ»:
 - «...Նայում էի գրատախտակի թվերին, աչքերին առաջ բրդել շալով աղջկա զլուխը,
 - ոտքերը ձյունի մեջ, ձյունի ճերմակության վրա օձի պես սև պարանը»:
 - «Ճվում է, թե այդ մոռացված մի անկյուն է այն օրերից, երբ դեռ մարդը չկար, և բրածո դիմուգավոր նույնքան ազատ էր զգում իրեն, ինչպես արջը՝ մեր օրերում»:
- 1) «Խոնարի աղջիկը»
 - 2) «Մթնաձոր»
 - 3) «Ալպիական մանուշակ»
 - 4) «Սիրիավ»

33

Ո՞ր հատվածը Հ. Թումանյանի որ ստեղծագործությունից է:

- | | |
|-----------------------|--|
| 1. «Անուշ» | ա. Անց է կենում դարձյալ տարին: |
| 2. «Թմկաբերդի առումը» | Նայում է կույսն ամեն օր, |
| 3. «Փարվանա» | Ոչ մի սարից, ոչ մի ճամփին |
| 4. «Հայոց լեռներում» | Չի երևում ձիավոր: |
| | բ. Տանում ենք հնուց մեր գանձերն անզին, |
| | Մեր գանձերը ծով, |
| | Ինչ որ դարերով |
| | Երկնել է, ծնել մեր խորունկ հոգին: |
| | գ. Անմուրազ մեռած սիրահարների |
| | Աստղերը թռած իրար են գալիս, |
| | Գալիս, կարոտով մի հեռ համբուրվում |
| | Աշխարհից հեռու՝ լազուր կամարում: |
| | դ. Բաց արավ ցերեկն իր աչքը պայծառ |
| | Աշխարհի վրա, Զավախսի վրա, |
| | Ավերակ բերդին սև ամպի նման |
| | Ծուխն ու թշնամին չոքել են ահա: |
- 1) 1-զ, 2-դ, 3-ա, 4-բ
 - 2) 1-զ, 2-ա, 3-դ, 4-բ
 - 3) 1-ա, 2-բ, 3-դ, 4-զ
 - 4) 1-զ, 2-դ, 3-բ, 4-ա

34

Վ. Տերյանի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:

Եվ կարտակեզ ահա կրկիճ
Վերադառնում եմ, որ առհավետ
Ուժկաղիր լինեմքո հիմ երգիճ
Եվ լսմ, լսմ անուշքո երգի հետ...

- 1) «Որպես լեռն է մեր պայծառ»
- 2) «Որպես Լաերտի որդին»
- 3) «Սի՞թե վերջին պոետն եմ ես»
- 4) «Կարծես թե դարձել եմ ես տուն»

35

«Սասնա ծոեր» էպոսի վերաբերյալ ո՞ր պնդման մեջ սխալ կա:

- 1) Իմանալով Դավթի մահվան մասին՝ Խանդութը իրեն քերդի գլխից ցած է նետում և մահանում:
- 2) Խալիֆայի կողմից սպասվող վտանգից խուսափելու համար Սանասարն ու Բաղդասարը մոր խորհրդով հեռանում են Բաղդադից:
- 3) Մեծ Սիերը մենամարտում սպանում է Սըսրա Սելիքին և տիրում Բաղդադին:
- 4) Փոքր Սիերը լուծում է հոր վրեժը՝ սպանելով Զմշկիկ Սուլթանին և կոտորելով նրա զորքը:

36

Ի՞նչ է նշանակում բանաստեղծական շարք:

- 1) Այի քանի մասերից բաղկացած երկար բանաստեղծություն
- 2) Լեզվական և բովանդակային ներքին ընդհանրություն ունեցող բանաստեղծությունների ամբողջություն
- 3) տարբեր թեմաներով գրված բանաստեղծությունների ժողովածու
- 4) տասը բանաստեղծությունից բաղկացած ժողովածու

37

Ո՞րն է Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի գլխավոր նպատակադրումը:

- 1) գլխավոր հերոսի ամուսնության ձախողման վերաբերյալ զվարճայի պատմություն ստեղծելը
- 2) ազգի մտավորականներին մուրացկանության համար մեղադրելը
- 3) ազգի մեծահարուստ մարդկանց բրամտությունը ցույց տալը
- 4) մտավորականների թշվառ վիճակի նկատմամբ ազգային մեծատունների անտարբերությունը ցույց տալը

38

Նշված պարբերականներից որի՞ն է աշխատակցել Մ. Նալբանդյանը:

- 1) «Հյուսիսափայլ»
- 2) «Ազդարար»
- 3) «Մշակ»
- 4) «Խիկար»

39

Տրված բառազույգերից քանի՞սն են կազմված հոմանիշներից.

Ճաղկել-խարազանել, հեգնել-ծաղրել, շավիղ-կածան, կապուկ-տրցակ,
անվեհեր-դժիսեմ, տարտամ-անորոշ, հտպիտ-խեղկատակ, առաքուր-զինված:

40

Տրված բառերից քանիսն՝ ուղղագրական սխալ կա.

որձկալ, բամբիշ, ժումկալ, արհամարել, երկվություն, քողտիք, փոփոալ, դիցուկ,
փասյան, շանբուտ, անստգյուտ, հյուլել:

41

Տրված հատվածում քանի՞ ուղիղ խնդիր կա:

Թե ուր գնացին Հուդային սպանած երկուառ, չիմացվեց, բայց թողնելով ծանոթ
արահետը՝ նա խորացավ ձիթենիներով շրջապատված տարածքը՝ քսակի ոսկիները
շպրտելով իր շուրջը հայտնվող մուրացիկներին՝ ձեռքի դողացող ափերը անցորդ-
ներին ուղղած:

42

Տրված շարքում քանի՞ տեսակ դերանուն կա.

իրեն, սա, ինչ-ինչ, որևէ, նույնքան, մյուս, այստեղ, ուրիշ, ոմն, իրար, ոչ մի, այլ:

43

Հ. Մաքսույանի «Աշնան արև» վիպակի վերաբերյալ պնդումներից քանիսն՝ ուղղագրական սխալ կա:

- Աղունը, հակառակ Սիմոնի խեղճությանն ու անճարակությանը, կարողացել էր ընտանիքի համար բարեկեցիկ կյանք ստեղծել, քանի որ հարս էր եկել իր հոր տված հարուստ օժիտով:
- Աղունը հպարտությամբ է խոսում այն մասին, որ իր որդի Արմենակը գրելու ձիքը ժառանգել է իրենից, և նրա լավագույն գրվածքները իր պատմածների հիման վրա են ստեղծվել:
- Աղունը Արմենակի՝ կյանքում ունեցած հաջողությունները և բարձր դիքը կապում է այն բանի հետ, որ որդին բնավորությամբ իրեն է նման և չի ժառանգել իր հայր Սիմոնի հարմարվողականությունը:
- Աղունը անում է ամեն ինչ, որ իր կրտսեր որդի Սերոն նույնպես եղբոր նման քաղաքում ապրի:
- Աղունի մայրացուն դեմ էր, որ Աղունը ամուսնանա Սիմոնի հետ:
- Աղունը միշտ նշում է, որ թեև ինքը մայր չի ունեցել, բայց մայրացուն իրեն մեծաց-
րել ու խնամել է հարազատի նման:

44

Նախադասություններից քանիտում ստորակետ պիտի որվի:

- Հակոբին ճանապարհ դնելիս հայրս այդ ահեղ մարդն անգամ չկարողացավ զսպել արցունքները:
- Մտնելով նրա առանձնասենյակը և հանդիպելով կատարյալ լուրջան անմիջապես գլխի ընկա այստեղ ինչ-որ բան այն չէ:
- Աղելինան հագել էր մետաքսյա զգեստ կիսակարճ թիքերով և մազերը հավաքել նուրբ ժապավենով:
- Նորից հին մտքերից խռովվեց հոգիս և որոշեցի գնալ Ասպրամի խուցը դուրս քերելու այդ թշվառ կնոշը աշտարակից և վերադարձնելու նրան իր տիկնությունը:
- Իրար հանդիպում էինք վերիշելու քանականների Երևանը և հաճախ էինք քննարկում ներկան ու ապագան:
- Ոչ որի համար գաղտնիք չէր որտեղ էր թաքնվել այդ մարդը կամ ինչ նպատակներ էր հետապնդում:

45

Նշել բարդ բառերի համարները.

1. եռանկյուն, 2. արձակագիր, 3. ձեղնահարկ, 4. վերնատուն, 5. վատթարագույն,
6. ժպտադեմ, 7. գերած, 8. դասալիք, 9. մեծարզուն:

46

Տրվածներից որո՞նք են պարզ ժամանակաձևեր.

1. չէր ապաքինվել, 2. պետք է մտածեիր, 3. եփեցինք-բափեցինք, 4. արժանանալու է,
5. կանգ էր առել, 6. դուրս եկավ, 7. չպիտի լսես, 8. բույլ մի՛ տուր, 9. սիրտ արեց:

47

Նշել այն բառերի (բառաձևերի) համարները, որոնց բոլոր վանկերը բաց են.

1. հիրավի, 2. սիրելի, 3. հյուրասիրելու, 4. հնամենի, 5. ձեռնտու, 6. ձևափոխելու,
7. հայելի, 8. վերարկու, 9. մարտավկա:

48

Նշել նախադասության այն անդամների համարները, որոնց շարահյուսական պաշտոնը ճիշտ է նշված:

Ընդմիջումից հետո հանդեսի երկրորդ մասը պիտի սկսվեր մի բանաստեղծությամբ, որ արտասանելու էր Խոնարհի քույրը, և երբ վարագույրը բացվեց, փոքրիկ աղջիկը մանկան զիլ ծայնով սկսեց արտասանել:

1. **Երբ** - ժամանակի պարագա
2. **ընդմիջումից հետո** - ժամանակի պարագա
3. **Երկրորդ** - որոշիչ
4. **պիտի սկսվեր** - բաղադրյալ ստորոգյալ
5. **որ** - ուղիղ խնդիր
6. **վարագույրը** - ուղիղ խնդիր

Ո՞ր հատվածներն են արևմտահայերենով:

1. Արաքս, ինչո՞ւ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու, դեռ ծովը չի հասած,
Սգավոր ես ինձ նման:
2. Իրիկվան մեջ, զյուղին քով,
Կմրմնջե գուտն ուսիին տակ շքեղ:
Չայն կլեցնե աղբյուրն երգովը բյուրեղ,
Աստղը՝ բյուրեղ արցունքով:
3. Ու գեթ ցոլք մը տայի ոսկի իմ հուրես
Մութ հոգիի ճըրագմերուն ցրտահար:
4. Երեսդ է լուսնի նըման բոլորեալ, տեսդ՝ արեգական.
5. Թույլ շրջյուն մը, հետո բույր մը մշկենի.
Եվ համրագին գիրքը ձեռքես կ'իյնա վար:

Նշել Ե. Չարենցի ստեղծագործությունների համարները.

1. «Անվերնագիր» («Իմ մահվան օրը...»), 2. «Տաղ անձնական», 3. «Մեր պատմիչները և մեր գուսանները», 4. «Օտար, ամայի ճամփեքի վրա», 5. «Հեռացումի խոսքեր», 6. «Մահվան տեսիլ», 7. «Բիբլիական», 8. «Դանթեական առասպել», 9. «Հարդագողի ճամփորդները»:

Բ մակարդակ

51

Ո՞ր շարքի բոլոր բառերն են գրվում գծիկով:

- 1) անտես(անհայտ), գիշեր(ցերեկ), կողը(կոռքի)
- 2) հուշարձան(կորող), կաս(կարմիր), դույզն(ինչ)
- 3) հարավ(արևմուտք), Սևան(հեկ), մանր(մունք)
- 4) մեն(մենակ), փոխ(վարչապետ), թև(թիկունք)

52

Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատներն են միավանկ:

- 1) ուսուցուիի, առաջնակարգ, շրջանավարտ
- 2) խրճածն, կարկտաբեր, սնապարծ
- 3) աղյուսապատ, պնդողակ, թռչնորս
- 4) հանքափոր, անձկություն, մարդկային

53

Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:

- 1) **սնգույր** - երեսը ներկելու քսուք, **մատովակ** - գինի մատուցող
- 2) **զզոց** - սեղանի դարակ, **դարավանդ** - հնուց ավանդված
- 3) **լերկ** - բուսականությունից զուրկ, **գայթել** - ոտքը սահել
- 4) **զրաստ** - բեռնակիր կենդանի, **երախայրիք** - առաջին պտուղ

54

Ո՞ր շարքի բառերից **ոչ մեկի** արմատին (արմատներից մեկին) **չի** կարող միանալ տրված վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:

- 1) **-որդ** - միջնապատ, կարոտագին, բնութագիր
- 2) **-աճի** - տեսակավորել, սակավապետ, միգապատ
- 3) **-ու** - կատվածագ, առապար, բարդի
- 4) **-ի** - այծենակաճ, տարբերակ, վայրենաբար

55

Ո՞ր նախադասության մեջ մակրայ կա:

- 1) Ու ձորի գլխին մոլորված կանգնած՝ Նայում է ներքև՝ սիրտը սևակնած:
- 2) Փերիները սարի գլխին Հավաքվեցին գիշերով:
- 3) Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան՝ Վիճակ հանելու աշխույժ երգերով:
- 4) Մեր առջև ձորն էր թշում խավարչտին, Մեր դեմք՝ խաղում գիշերվա շունչը:

56

Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ չկա:

- 1) Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես՝ մնաս բարով:
- 2) Դեպի արևը դարեր ու դարեր թոփի՛ր, պլացի՛ր, ազնի՛վ քարավան:
- 3) Բայց աչքերը մեր արևներ չտեսան, Եվ մեր սրտերը՝ լուսավոր հեռուներ:
- 4) Ելի գարուն կգա, կբացվի վարդը:

57

Ո՞ր շարքի բոլոր բառերն են համապատասխանում նշված տեսակին:

- 1) որպեսզի, այսինչ, առանց - *քերականական*
- 2) հօգուտ, միահամուռ, զեկուցում - *նյութական*
- 3) սույն, դեպի, առթիվ - *քերականական*
- 4) անշուշտ, թերևս, իրավամբ - *վերաբերմունքային*

58

Ո՞ր տարբերակում անենթակա նախադասություն կա:

- 1) Քայլե՛լ ու քայլե՛լ, թափառե՛լ մենակ աշխարհի փոշոտ ճանապարհներին...
- 2) Կախարդվածի պես կանգնած՝ Տնե՛ր, տնե՛ր ավերակ...
- 3) Մթնշաղ է. անձրևում է միալար:
- 4) Պատիվի պահող չկա, Մասրենի՛, բարի՛ մասրենի:

59

Ո՞ր տարբերակում է տրված բարդ նախադասությունը սխալ փոխակերպված պարզի:

- 1) *Երկրորդ հարկի պատշգամբից ճառախոսում էր նև՝ այն մարդը, որ ճանապարհն հանդիպել էր մեզ:*
Երկրորդ հարկի պատշգամբից ճառախոսում էր ճանապարհն մեզ հանդիպած մարդը:
- 2) *Թփերի խշողը լսեցին թե չէ, կաքավներն իսկույն մի քանի պտույտով իջան արևախանձ արտերի վրա:*
Թփերի խշողը լսելուն պես կաքավներն իսկույն մի քանի պտույտով իջան արևախանձ արտերի վրա:
- 3) *Հայրենասեր մարդը, եթե անգամ կենսական պայմանները դժվարին են, չպետք է լրի հայրենի հողը:*
Հայրենասեր մարդը չպետք է լրի հայրենի հողը անգամ կենսական պայմանները դժվարին լինելու դեպքում:
- 4) *Ես, որ աշակերտել եմ թատերական արվեստի համաշխարհային դեմքերին, հայրենիքում անփոխարինելի դասեր էի առնում Արմենյանից:*
Ես՝ թատերական արվեստի համաշխարհային դեմքերին աշակերտածս, հայրենիքում անփոխարինելի դասեր էի առնում Արմենյանից:

60

Ո՞ր տարրերակում է ստորադաս նախադասության բնույթը սխալ նշված:

- 1) Հայտնիք ինձ՝ ինչն է խանգարում արքայորդու ամուսնությանը իշխան Սևադայի դստեր հետ: (*ուղիղ խնդիր*)
- 2) Սարյանը, թեև ծնվել է Ռուսաստանում, հայրենասիրական ոգով է դաստիարակվել: (*զիջման պարագա*)
- 3) Ինչ որ ապրել էր սիրիյան հեռավոր աքսորավայրում, հիշում էր ամենայն մանրամասնությամբ: (*ենթակա*)
- 4) Մի՞թե քո սիրելի դայակը ծերացել է այնքան, որ այլևս ոչ մի բանի պիտանի չէ: (*չափի պարագա*)

61

Պեղումներից ո՞րն է սխալ:

- 1) «Դանայան տակառ» արտահայտությունը Գ. Զոհրապի «Ճիտին պարտը» նովելում դարձել է տպավորիչ համեմատության եզր:
- 2) Պ. Դուրյանի «Խն ցավը» բանաստեղծությունն ավարտվում է «Աստուծո ծաղրճ է Աշխարհ ալ արդեմ...» տողով:
- 3) Բաֆֆին գրել է ոչ միայն արձակ ստեղծագործություններ, այլև բանաստեղծություններ:
- 4) Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքի հերոս Լևոնը երազում էր մեկնել Իտալիա՝ Լուիզային մոտ լինելու համար:

62

Տրված հատվածը Հ. Սահյանի ո՞ր բանաստեղծությունից է:

*Փայտահատը հին երգն էր կրկնում
Եվ տաք սղոցն իր յուղում էր կրկին,
Թեղին անտարբեր ականջ էր դնում
Տապալված կաղնու խոլ հառաչանքին:*

- 1) «Անտառում»
- 2) «Քարափը»
- 3) «Մարենի»
- 4) «Օրը մքնեց»

63

Տրված հատվածում քանի՞ դերբայական դարձված կա:

Այս միտքն այնքան հաճելի թվաց Արշակին, որ նա նստեց՝ մտածնունքներից ու երթևեկությունից հոգնած: Բայց նա շարունակում էր մտածել և կարծում էր, որ Գնելին բարեկամանալով՝ կարելի է թե՛ հանգիստ զբաղվել Ավանի շինությամբ և թե՛ պատժել անհնազանդ նախարարներին: «Ի՞նչ անել, որի՞ն նախապատվություն տալ», - մտածում էր նա:

Տրված քառերից քանի՞սն են բարդածանցավոր.

Վարքագիր, հրակայուն, գերբնական, անընդգրկելի, տարակարծիք, ակնածանք, կայանատեղ, բանտարկյալ, պատմավեա:

Չարքերից քանիսում նախադասության անդամի ձևաբանական վերլուծության սխալ կա:

Քնած թե արթու՛ ծերումին լսում էր երգը հեռավոր օվկիանի, ու հոգին, աշխարհից անէացած, տանում էր նրան հեռու մի աշխարհ, ուր ոչ վիշտ կար, ոչ էլ տառապանք:

- **ուր** - հարաբերական դերանուն, **կար** - պակասավոր բայ, ըղձական անցյալ
- **քնած** - հարակատար դերբայ, չեզոք սեռ, **թե** - ստորադասական շաղկապ
- **հեռու** - տեղի մակրայ, **մի** - անորոշ դերանուն
- **անէացած** - սոսկածանցավոր բայ, **նրան** - անձնական դերանուն
- **էլ** – ժամանակի մակրայ, **լսում էր** - անկատար անցյալ, ներգործական սեռ

Մոքերից որո՞նք են հակասում տեքստի բովանդակությանը կամ չեն բխում նրանից:

Հին աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը Ալեքսանդրիայի հիսաքանչ փարոսն է: Այն կառուցվել է Պտղոմեոս թագավորի օրոք, որի անունն էլ պետք է գրվեր փարոսի վրա: Սակայն նախագծող և ճարտարապետ Սոստրատեսը այս անարդարությանը չի հաջտվում և դիմում է խորամանկության: Մարմարի վրա քանդակում է հետևյալը. «Կինզացի Սոստրատեսն այս նվիրում է փրկարար աստվածներին՝ ի սեր ծովագնացների»: Հետո այս գրվածքը ծեփում է բարակ շերտով, ապա վրայից գրում է արքայի անունը՝ համոզված լինելով, որ ամենակարող ժամանակը ծեփը կպոկի, և աշխարհին հայտնի կղաղնա իսկական ստեղծողի անունը: Այդպես էլ լինում է. որոշ ժամանակ անց ծեփը պոկվում է, և երևան է զայխ Սոստրատեսի անունը:

Այս հրաշագեղ կորողը կանգուն է մնացել շուրջ հազար տարի, մինչև մ.թ. 8-րդ դարում լցորեն վճասվել է երկրաշարժից: Ապա սկսվել է հրաշագեղ կորողի քայլայումը: Իսկ 14-րդ դարում փարոսն ամրողովին կործանվել է հումկու երկրաշարժից:

1. Սոստրատեսը Պտղոմեոսի պահանջով գրում է, որ փարոսը նվիրում է փրկարար աստվածներին՝ ի սեր ծովագնացների:
2. Սոստրատեսը թագավորի անունը գրում է մարմարի վրայի գրվածքը ծածկած նոր շերտի վրա:
3. Բնական տարերքների պատճառով մարդկությունը գրկվել է աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը համարվող փարոսից:
4. Փարոսի իրական ստեղծողի անունը հայտնի է դառնում 14-րդ դարի հումկու երկրաշարժից անմիջապես հետո:
5. Սոստրատեսը հույս ուներ, որ ծեփը բափելուց հետո գիտնականները կկարողանան վերծանել իր զայխնագիրը:

67

Ո՞ր նախադասություններում կետադրական սխալ կա:

1. Սուրբ Սովորայի տաճարը չորս կողմից շրջապատված է մինարեթներով. քրիստոնեական շրեղաշուր տաճարը հետազոյում մզկիթի է վերածվել և կցվել են այդ չորս մինարեթները:
2. Ահա և ինքը՝ Վիլյամ Սարոյանը՝ Ֆրեզնոյի հյուրանոցներից մեկի նախասրահում կանգնած:
3. Ես, կանգնած տաճարի կենտրոնում, նայում եմ վեր. հպարտ եմ, որ այնտեղ՝ ամենավերևում՝ երկնքին մոտիկ՝ այն հրաշք զմբեթն է, որ վերակառուցել է Տրդատ ճարտարապետը:
4. Հունական ավերի և Միջերկրականի կենտրոնում գտնվող կղզիների բնակիչները տեսնում են՝ ինչպես են ծովի խորքից ավելի ու ավելի շատ առագաստներ գալիս իրենց կողմը:
5. Ուղեվարը մեզ պատմում է միջնադարյան զմբեթի կործանվելու և վերակառուցվելու մասին, բայց Տրդատ ճարտարապետի անունը հասկանալի է՝ չի տալիս:

68

Նշել այն բառերի համարները, որոնցում արմատի հնչյունափոխություն կա.

1. երևութական, 2. սննդամբերք, 3. սառցաշերտ, 4. թախծախառն, 5. կարծրատիա, 6. վարչական, 7. ահազնացայտ, 8. վերստին, 9. ուխտադրուժ:

69

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը:

1. **Այս, այդ, այն** ցուցական դերանունները գերադաս նախադասության կազմում կարող են հանդես գալ որպես հարաբերյալ:
2. Որոշիչ ստորադաս նախադասությունը կարող է կապվել գերադասին **որ, երր,** **որուեղին** հարաբերականներով:
3. Ենթակա ստորադաս նախադասությունը գերադասի հետ սովորաբար կապվում է **որ, թեև, թե** շաղկապներով:
4. Ներգործող անուղղակի խնդիր ստորադաս նախադասության գերադաս նախադասությունը միշտ կրավորական կառուցվածքի է:
5. Միևնույն բարդ նախադասության կազմում միաժամանակ չեն կարող լինել և համադասությամբ, և՝ ստորադասությամբ կապվող բաղադրիչ նախադասություններ:
6. Գերադաս նախադասության պարզ ստորոգյալը կարող է արտահայտվել ստորադաս նախադասությամբ:

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել **Ճիշտ է, Այսալ է, Չգիտեմ** տարբերակներից որևէ մեկը:

1. Ենթակայական դերբայը կարող է ունենալ ուղիղ խնդիր լրացում:
2. Անորոշ դերբայը ենթարկվում է **ու** հոլովման:
3. Հայերենի բոլոր բայերը ունեն դերբայական բոլոր ձևերը:
4. Ոչ բոլոր դեպքերում է բայական արմատով **և -ած-**ով կազմված բառը հարակատար դերբայ:
5. **Ե**խոնարհման բոլոր բայերի անորոշը և վաղակատարը ձևով նույնն են:
6. Անորոշ դերբայը եղանակային ձևերի կազմությանը չի մասնակցում: